«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Հաստատություն՝ Դիտակ գյուղի մանկապարտեզ

Դաստիարակ՝ Սաթենիկ Խաչատրյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Գլուխ 1. Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

1.1. Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները--------- 4

1.2. Հայ ազգային ծեսերն ու տոները---------- 7

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

Գլուխ 2. Պարապմունքներ---------- 13

Եզրակացություն---------- 20

Գրականության ցանկ---------- 21

Ներածություն

Արդիականություն: Հայոց ազգային տոները տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ և վերաիմաստավորումներ են ունեցել: Սակայն այս տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որ ժամանակի կրոնաքաղաքական փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա: Հայկական մշակույթը հնուց ի վեր, մինչ օրս էլ, աչքի է ընկնում իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով: Մենք բոլորս այս տոները նշում ենք, որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ, սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից: Այստեղ փորձել ենք առանձնացնել մի քանի ազգային տոներ, որոնք երկար ճանապարհ են անցել հեթանոսությունից մինչև քրիստոնեություն:

Հեթանոսական շրջանում ազգային տոների մեծ մասը նվիրված էր աստվածների և բնության տարբեր տարերքների պաշտամունքին: Չնայած որ քրիստոնեության ընդունումով դրանցից շատերը փոխել են իրենց անվանումն ու խորհուրդը, բայց դրանցում գոյություն ունեցող մի շարք սովորույթներ մինչ օրս էլ պահպանել են իրենց արժեքը: Սակայն, ինչպես անցյալում, այնպես էլ այժմ տոներն ունեն նույն գործառույթը՝ այն է համախմբել մարդկանց տոնի և ծեսի ազգային գաղափարի շուրջ:

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներն ու հանգամանքները: Դրանցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը:

Նպատակը: Ծեսը ավանդական, կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, մարդկային հարաբերություններում և այլուր: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունն ու հարատևությունը:

Գլուխ 1. Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

1.1. Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները

Ծես նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, ազգությանը, պետությանը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և դարեդար են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել էթնոսին բնորոշ առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել այդ էթնոսի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին:

Ծիսակարգը մարմնավորում է մարդկանց վարքի տարբեր կողմերը: Եթե սովորույթը մարմնավորում է ամենօրյա վարքային նորմերը, ապա ծիսակարգին դիմում են միայն արտակարգ, ոչ ամենօրյա իրավիճակներում (ծնունդ, կնունք, պսակադրություն, մահ, և այլն):

Մշակույթի ժառանգականության փոխանցման մյուս ավանդական ձևը սովորույթն է: Սովորույթը վարքի կարծրատիպացված միջոցն է, որը վերարտադրվում է որոշակի հասարակությունում կամ սոցիալական խմբում և սովորական է նրա անդամների համար: Սովորույթները կենցաղի պահպանված սովորական մասն են, ծեսերի և ծիսակարգերի բեկորները, որոնք կորցրել են իրենց առաջնային նշանակությունը, բայց պահպանել են մարդկանց միավորելու գործառույթն ամենօրյա ընդունված նորմերով: Սովորույթը նաև կենցաղում վարքի կարգավորիչ է, որը աստիճանաբար դարձել է ավանդույթ: Սովորույթի կայունությունը, նրա դիմադրողականությունը, փոփոխություններն այդքան մեծ են այն պատճառով, որ

նրանք միշտ ձևավորվում են հասարակությունում և ընդունված են նրա կողմից որպես «ստիպողական պահանջ»:

Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական և չունեն նպատակային, գործնական բնույթ: Մարդաբան Մ. Դուգլեսը ծեսը սահմանում է որպես գործողությունների տիպեր, որոնք ծառայում են հավատքի արտահայտման համար, կամ էլ որոշակի խորհրդանշական համակարգերին պատկանելու ձևեր են: «Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ:

Օրինակ՝ հայոց ավանդական կենցաղում բավական տարածված են խնձորի հետ կապված ծեսերը, որոնք հաճախ կազմակերպվում են Վարդավառին: Տոնի մասնակիցները խնձոր են խորովում և խորոված խնձոր բաժանում: Կամ՝ հարսանեկան արարողության ժամանակ խնձորի՝ որպես պտղաբերման խորհրդանիշ և այլն:

Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ըստ Ա. Սարգսյանի՝ «Ծիսակարգը խիստ կանոնակարգված է, անփոփոխ, միակերպ և հիմնականում կապվում է կրոնական պատկերացումների հետ, ունի զանգվածային բնույթ, այսինքն՝ դրան մասնակցում են մարդկանց մեծ խմբեր»:

Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական և չունեն նպատակագործնական բնույթ: Աշխարհում շատ ու շատ ժողովուրդներ կրոնական, քաղաքական, գաղափարախոսական համակարգերի փոփոխություններից հետո իրենց ծեսերը, այնուամենայնիվ, շարունակում են կատարել: Ժողովրդական ծեսը ծրագրված երևույթ չէ, այն ժողովրդի հավաքական և տևական ստեղծագործության արդյունք է, անընդհատ փոփոխությունների ենթակա, բայց միաժամանակ հիմնական բաղադրիչներով խիստ պաղպանողական: Հայկական ծեսերը շատ հարուստ երգեր ու պարեր ունեն: Երգերի բովանդակությունը միշտ համապատասխանում է տվյալ ծեսի իմաստին, իսկ ծեսերին բնորոշ ուտելիքները, խնջույքները, տոնական հագուստը,

նվերները ունեն իրենց առանձնահատկությունները։ Դրանք բոլոր տոներում են առկա։ Ոչ մեկն ինքնանպատակ չէ։ Խնջույքները չեն կազմակերպվում ուտել-խմելու համար, յուրաքանչյուր ծեսին կազմակերպվող խնջույք պետք է համապատասխանի տվյալ ծեսի իմաստին, ըստ որի համապատասխանեցման համար էլ ընտրվում է ծեսը կազմակերպելու վայրը, ժամը, մասնակիցները, ուտեստների տեսակները։

Այսպիսով, հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգևոր ոլորտի խտացումներ՝ ծեսերը, սովորույթները անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կառույցի առանձին կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական և ներդաշնակ մի ամբողջություն։ Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս և՛ որպես ստեղծագործ, և՛ որպես գործիչ, և՛ որպես քննադատ։[1]

[1] Նահապետյան Ռ., Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Ե.,2004
5.Кагаров Е. Г. Культ фетишей и животных в Древней Греции, СПб., 1913
6.Ионин Л. Г. Социология культуры, М., 2004, с. 166

1.2. Հայ ազգային ծեսերն ու տոները

Ղափամայի ծես

Այս ծեսը հատկապես սիրելի է սաների համար, քանի որ շատ «քաղցրահամ ու մեղրանուշ» ծես է: Ամեն մեկն իր հետ բերում է փոքրիկ դդում, ծանոթանում ենք, իմանում, թե ինչ է դդումը, ինչ գույն ունի, ինչ ձև ունի, ինչ համ ու հոտ: Կտրում ենք դդումը, հանում կորիզները, իմանում, թե կորիզներն ինչի համար են, հաշվում ենք, տնկում ենք, որ նորից դդում աճի, իսկ մնացած կտորներով կերպարներ ենք ստանում: Դդումիկներով դուրս ենք գալիս բակ, խաղեր խաղում, գլորում: Գունավոր թղթերը կտրատում ենք, ներկում, սոսնձում կորիզները և ստանում ենք դդմադիմակներ: Կատարում ենք տեխնոլոգիական աշխատանք, դդմանարնջագույն թելերով պատրաստում ենք դդմե գնդիկներ և կախում խմբասենյակի պատուհաններից կամ դռնից: Նաև դդումների վրա ներկում ենք ու սիրուն կերպարներ ստանում՝ էլ՛ տխուր դեմքով, է՛լ ուրախ, է՛լ զարմացած...

Եվ, ամենակարևորը, Ղափաման: Դդմի գլուխը կտրում ու հանում ենք կափարիչի նման, փորում ենք, միջուկը հանում, մեջը լցնում բրինձ, չամիչ, չիր, մեղր, կարագ, համեմունքներ ու դնում ջեռոցը՝ այս կարևոր իրադարձությունը համեմելով ուրախ ծիսերգերով: Արդյունքում՝ մի սիրուն, շքեղ, փայլուն ու համող ղափամա: Այս տարբեր աշխատանքների միջոցով սանի մոտ զարգացնում ենք նախ զգայարանները, կարողանում է համտեսել, իմանալ՝ ինչ համ ունի, ճանաչում է գույնը, ձևը, չափը, կառուցվածքը և այլն:

Սանը տեխնոլոգիական աշխատանք է կարողանում կատարել, ինքնուրույն կտրել, պտտել թելը, փակցնել, սոսնձել.զարգանում է մանր մոտորիկան: Ղափամայի ծեսը նշում ենք Սուրբ Երրորդություն եկեղեցու բակում պատարագից հետո: Մի իսկական գունազարդություն, դդմից համեղ տարատեսակ ուտեստներ ենք պատրաստում, եկեղեցու բակում սիրուն ղափամայացուցահանդես կազմակերպում, ու սկսվում է հյուրասիրությունը: Սեբաստացի, ծանոթ–անծանոթ, հյուրասիրություն, համեցե՛ք, համեցե՛ք...

Բարեկենդան

Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն։ Ուրախության, զվարճանքի ծես է, որը կապված է գարնան սկսելու հետ։ Ծեսի նպատակն է զվարճանալու, ուրախանալու, հրճվելու միջոցով վերակենդանացնել մարդուն, դիմավորել բնության զարթոնքը։ Պարերի, խաղերի, զվարճությունների երկու շաբաթվա ընթացքում խաղում ենք տարբեր խաղեր՝ ճոճախաղ, ընկուզախաղ, աքլորակռիվ և այլն։ Կատարում ենք ուղտախաղ, ուղտի կերպարով տիկնիկ ենք պատրաստում և պարեցնում։ Ուղտը փորձում է վազել երեխաներիի հետևից, բռնում նրանց, իսկ նրանք փախչում են այս ու այն կողմ։ Պատրաստում ենք Ուտիս տատ և Ակլատիզ։ Ուտիսը մեզ անընդհատ ասում է, որ յուղոտ ուտելիքներ ուտենք, իսկ Ակլատիզը՝ հակառակը։ Ակլատիզը պատրաստում ենք սոխի գլխից, որի վրա խրում ենք չորս սպիտակ և երեք սև փետուր, որոնք խորհրդանշում են սև հողը և սպիտակ ձյունը։ Ակլատիզի պարանոցից կախում ենք քարեր և կծու պղպեղ, որ եթե յուղոտ բան ուտի, քարն ընկնի գլխին, և բերանն այրվի պղպեղով։ Յոթ փետուրները խորհրդանշում են յոթ շաբաթները, որոնք ամեն շավաթ սաները հերթով պոկում են, իսկ վերջում Ակլատիզը թռչուն է դառնում և գնում։ Փայտե շերեփներով պատրաստում ենք զանազան տիկնիկներ և երգելով մեր տոնի ամենսիրված երգը՝«Գնացեք, տեսեք...»-ը՝ շրջում դպրոցով։ Սա է Բարեկենդանը ...

Տեառնընդառաջ

Նախապատրաստվում ենք Տեառնընդառաջի ծեսին։ Սաների հետ գնում ենք խանութ, իրենք փորձում են ինքնուրույն գնումներ անել. ընտրում են ալյուրը, շաքարավազը, փոխինդը, մեղրը և վճարում։ Խմբասենյակում մի քիչ խաղում ենք փոխինդով ու ալյուրով, թվեր, տառեր, պատկերներ նկարում, շաղ տալիս այս ու այն կողմ։ Հետո ջուր ենք ավելացնում, պատրաստում փոխինդե գնդիկներ, հալվա, տանը մայրիկների օգնությամբ գաթաներ ենք թխում, որպեսզի ծեսի ժամանակ հյուրասիրենք մեր իսկ պատրաստած աղանդերը։ Չենք մոռանում, որ ծեսը շարունակվում է տանը, յուրաքանչյուր երեխա իր մայրիկի հետ «Տեառընդառաջի ծես-նախագիծ» է իրականացնում՝ այսպիսով ապահովելով դպրոց-ընտանիք փոխադարձ կապը։ Սկսում ենք Տեառնընդառաջի սեղանը

զարդարելու արարողությունը։ Զարդարում ենք հալվայով, փոխինդե գնդիկներով, կոնֆետներով, աղանձով, ադիբուդիով, որոնք սիրով պատրաստում և բերում են սաները մայրիկների հետ։ Այգեպանի հետ հավաքում և դասավորում ենք փայտերը, որպեսզի միասին վառենք խարույկը։ Մեծ շրջան ենք կազմում, վառում կրակը, և սկսում Տեառնընդառաջի՝ գարնանամուտն ազդարարող տոնակատարությունը։ Այս տարին նշանավորվեց ևս մի նորամուտով՝ հունվար ամսվա վերջին կրթահամալիրի Ագարակի ձիերի խնամակալների հարսանիքով, և միաժամանակ ծիսական-հարսանեկան գեղեցիկ ծես տեղի ունեցավ։ Այս նորամուտով սկիզբ դրվեց ևս մեկ ծեսի ինտեգրման, այն է՝ «Հարսանեկան ծեսը կրթահամալիրում» ծես-նախագիծը:

Ծառզարդար-Զատիկ-Կրկնազատիկ

Ծաղկազարդը նախորդում է Զատկին, որի ընթացքում սկսում ենք պատրաստվել ծեսին, դիմավորել Ուտիսին ու Ակլատիզին։ Զատիկը ունի իր ծիսական ծառը, տիկնիկները և ծիսական զանազան խաղերը։ Ծառը խորհրդանշում է անցյալը, ներկան, ապագան։ Ծեսի ընթացքում միասին գունավորում ենք ձվեր և թելերով կախում ծառի ճյուղերից։ Ձվերը խորհրդանշում են աշխարհը։ «Տի՛զ, տի՛զ, Ակլատի՛զ...» բացականչություններով հարվածում ենք Ակլատիզին և քշում նրան բակից։ Այս ծեսը մի քիչ նաև տեխնոլոգիական կարող ենք որակել։ Ծնողները մեզ հյուր են գալիս, ու սկսում ենք միասին պատրաստել զատկե ձվիկներ։ Սկզբում երկու կողմից փոքրիկ անցքեր ենք բացում ձվիկների վրա, ապա սաները փչելով դատարկում են ձվիկների պարունակությունը, զարգացնում ենք փչելու կարողությունը։ Փչում ու փչում են, բայց դեղնուցը դուրս չի գալիս, տեսնեք՝ ինչ ուժով ու ոգևորությամբ են փչում, ու ինչ ուրախություն, երբ վերջապես դեղնուցը դուրս է գալից անցքից։ Խառնում ենք մեզ մոտ եղած բոլոր գույներն ու ներկերը։ Խառնաշփոթը պատրաստ է։ Գույնե՛ր-գույնե՛ր... Բոլորով սկսում ենք զարդարել ներկերի տարատեսակ երանգներով։ Արդյունքում՝ բազմապիսի զատկե ձվիկներ։

Սկսում ենք ցորենացանը, սաները բերում են բամբակ և ցորեն, ափսե ու ջուր։ Հագնում ենք գոգնոցները, դուրս գալիս բակ։ Սկզբից բամբակն ենք հարթ

փակցնում տարայի վրա, հետո մի քիչ ջուր ենք ցողում, որ խոնավանա բամբակը, ապա լցնում ենք ցորենը, կարելի է նաև ոսպ ցանել, քանի որ ոսպից դուրս եկածը նույնպես գեղեցիկ է, հետաքրքիր կառուցվածք ունի։ Ցանում ենք ցորենը՝ անհամբեր սպասելով ածիկի աճելուն։ Ցանում ենք նաև քար, ավազ, ալյուր, որպեսզի որոշ ժամանակ հետո սաները որոշեն՝ ինչու չաճեցին դրանք։ Քանի որ մեր կրթահամալիրում իրականացվում են ամենամսյա վերապատրաստումներ Հայաստանի տարբեր մարզերից, կրթական փոխանակման ծրագրերով, ծես–նախագծերով այցելություններ ենք կազմակերպում տարբեր նախակրթարաններ։ Միասին բոլոր խմբերով երգում ենք, խաղում, պարում, ձու գլորում, փետուր նետում, տարատեսակ ծիսական խաղեր խաղում՝ ձուկռվոցի, ձուպտտոցի, ձուգլորոցի։

Համբարձում–Զանգյուլում

Զատկին հաջորդում է Համբարձումը, որը նշվում է հինգշաբթի օրը։ Հայաստանի մի շարք մարզերից վերապատրաստվողների հետ նախապատրաստվում ենք տոնին։ Գույնզգույն ծաղիկներ ենք սոսնձում ռեզինների վրա՝ համադրելով գույները։ Յոթ աղջիկների հետ գնում ենք պարտեզ։ Քանի որ վաղ առավոտյան սկսվում է հիմնական ծեսի՝ վիճակի նախապատրաստությունը, մի խումբ հինգ տարեկան «ծաղիկներով» դուրս ենք գալիս բակ, մեր սիրուն, կանաչ լանջերից հավաքում երիցուկներ, խատուտիկներ, ծտապաշարներ, առվույտներ՝ վերհիշելով ծաղիկների անունները:

Ծաղկահավաքի ընթացքում ներկայացնում ենք, թե ինչպես է պետք ծաղիկը քաղել, որ չփչանա՝ նաև դրանից հետագայում դեղաբույս պատրաստելու համար։ Իրար օգնելով՝ հյուսում ենք ծաղիկները, պատրաստում երփնագույն ծաղկե ճակտնոցներ ու գունագեղ ծաղկաշղթաներ։ Վիճակի ծեսին նախապատրաստվելիս աղջիկների խմբով՝ յոթ հոգով, դուրս ենք գալիս, հավաքում յոթ աղբյուրից յոթ բուռ ջուր, յոթ տեսակի ծաղկից յոթ տերև, յոթ տեսակի ծաղիկ, հոսող առվից յոթ տեսակի քար։ Կատարում ենք տեխնոլոգիական աշխատանք՝ պատրաստելով Վիճակի տիկնիկը։ Այցելում ենք սաների կամ պատահական մարդկանց տներ, ճակտնոց նվիրում, երգում ու ձու կամ որևէ այլ բան ստանում փոխարենը։

Հերթական կրթական փոխանակման շրջանակներում այս անգամ Համբարձման ծեսը գնաց մարզ։

Պատրաստեցինք ծաղկե ճակտնոցներ և ճամփա ընկանք։ Մտանք գյուղապետարան, գովեցինք գյուղապետին, հետո մշակույթի տուն, դպրոց, գովեցինք-գովեցինք, ստացանք նվերներ, զարմացրինք մեր սեբաստացիական այլընտրանքայնությամբ... Չմոռանամ նշել՝ երբ շվի էինք նվագում, ավարտելուց հետո պտտվեցինք, տեսնենք՝ սաների մի ամբողջ խումբ զարմացած մեզ է հետևում, բարձր ծափահարություններ... Խաղացինք Վիճակը, որոշեցինք, թե ում ինչ բարեմաղթանք է բաժին հասնում, հաջողություն մաղթեցինք ու ճանապարհ ընկանք։ Ուրախալի է, երբ կարողանում ես մեկ այլ կրթական հաստատության փոխանցել դպրոց-պարտեզի այլընտանքային մոտեցումները, ծեսերի ճանաչողությունը, այն ամենը, ինչն ազգային է և անփոխարինելի։ Սա է ծեսը՝ իսկական ծեսը:

Վարդավառ

Հնում մարդիկ այնքան էին հավատում ծեսերի զորությանը, որ հնարել էին Անձրևաբեր և Անձրևախափան ծեսեր՝ դրանց միջոցով կարգավորելու բնության երևույթները։ Հայտնի են շատ ծիսական երգեր ու խաղեր՝ կապված տարբեր ծեսերի հետ։ Հայոց ավանդական տոնակարգում Վարդավառը ամենամեծ ամառային տոնն է։ Վարդավառ (Մարինե Մկրտչյանի բլոգից) բառն ունի տարբեր ստուգաբանություններ, որոնցից մեկի համաձայն կազմված է վարդ-ջուր և վառ-սրսկել արմատներից, նշանակում է ջրցանություն։ Տոնը սկսվում է առավոտյան։ Բոլորով իրար վրա ջուր ենք լցնում՝ հաշվի չառնելով տարիքը, սեռը։ Ոչ ոք չպիտի նեղանա, քանի որ այդ օրը ջուրն ունի այսպես ասած բուժիչ ուժ։ Միմյանց վարդեր ենք նվիրում, թերթիկները լցնում ջրի մեջ, ջուր ցողում վարդերով։ Վարդեր նվիրելով և վարդի ջուր ցողելով՝ սեր ենք տարածում բոլորի վրա և պայքարում ենք չարի դեմ: Ծանոթանում ենք անձրևաբեր ծիսական կերպարների հետ, սովորում անձրևաբեր ծիսական երգեր, պատրաստում անձրևաբեր տիկնիկ-կերպարներ՝ մեր պատկերացմամբ և երևակայությամբ։

Վարդավառը համընկնում էր դաշտերում հասունացած հացահատիկների հավաքի հետ, դրա համար ցորենի հասկերից «Խաչբուռ» ենք պատրաստում։ Այս

ծեսի միջոցով ծանոթանում ենք ազգային ավանդույթներին ու սովորույթներին՝ դառնալով դրանց կրողն ու փոխանցողը: Պատրաստած ծիսական պարագաներով, ժողովրդական, ազգային ծիսական խաղերով դառնում ենք ակտիվ մասնակից, փոխանցող, տարածող:

Հարիսա- Թթուդրիկ

Հարիսան ու թթուդրիկը կարծես մեկտեղվում են. նախ՝ թթուդրիկ, ապա՝ հարիսա:

Ամեն մեկը բանջարեղեն է բերում՝ կաղամբ, լոլիկ, վարունգ, գազար, ծաղկակաղամբ, սխտոր, կանաչի և այլն: Լվանում ենք միասին, համտեսում, կտրատում, սաները կարողանում են թե՛ ինքուրույն լվանալ, թե՛ կտրատել, սիրուն դասավորում ենք տարաների մեջ: Բանջարեղեններից պատրաստում ենք թթու-կերպարներ, թթու-դեմքեր: Պատրաստում ենք աղաջուր, կատարում ենք բնագիտական փորձ և սպասում թթվելուն, որ Հարիսայի ծեսի ժամանակ համտեսենք: Մեր պատրաստած թթուները մասնակցում են նաև կրթահամալիրյան «Թթու- էքսպո» ցուցահանդեսին: Հարիսայի ծեսը շատ մեծ շուքով ենք նշում կրթահամալիրում: Սաները տանից բերում են ձավար, համեմունք, ձեթ, կարագ, միս, եփում են մի մեծ կաթսայում, օր է որոշվում ըստ օրացույցի, ամբողջ դպրոցով սկսում ենք տոնել և ուտել, երգել ու պարել: Ծեսը մեզ տալիս է հնարավորություն, ստեղծում միջավայր, որտեղ սովորողները նախապատրաստման և իրականացման ընթացքում կիրառում են իրենց հմտություններն ու գիտելիքները՝ շարունակ ինքնակրթվելով ու ավելի առաջ շարժվելով:

Այսպիսով, բոլոր վերոնշյալ ծեսերով փորձում ենք զարգացնել սովորողների ինքնուրույնությունը, ստեղծագործական երևակայությունը, տարատարիք սովորողների հետ համատեղ խմբային և անհատական հետազոտական աշխատանքներ կատարելու, ուսումնական նախագծեր իրականացնելու, իրար հետ շփվելու, միջհամայնքային, միջմարզային կապեր հաստատելու, իրար ճանաչելու, իրար հետ սովորելու և միասին բազմաթիվ խնդիրներ լուծելու հմտություններն ու կարողությունները, ծանոթացնել «Իմացումի հրճվանք» ծրագրին, ուսուցման մեթոդներին և միջոցներին:[2]

---

[2] 1.Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոներ, Ե., 2005, էջ 321:
2.Մկրտչյան Ս., Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավա-տալիքներ (ավանդույթ և արդիականություն), Ե., 2010, էջ 101:

Գլուխ 2. Պարապմունքներ

Թեմա՝ Տեառնընդառաջ

Խումբ՝ միջին

Նպատակ

Ազգային ծիսական ավանդույթների, մշակույթի փոխանցում, յուրացում:

Խնդիր

- Տեառնընդառաջ ծիսակարգի ուսումնասիրություն,
- Տեառնընդառաջի ազգային ծիսական երգերի, պարերի ընտրություն, ուսուցում, կատարում
- ծիսական ուտեստների պատրաստում, ձևավորում,
- ազգային պարերի, պարերգերի ուսուցում, կատարում,
- ծիսական միջավայրի ստեղծում:

Աշխատանքի ժամանակացույց

Հունվարի 8 — փետրվարի 14

Ընթացք

Ուսումնասիրել Տեառնընդառաջ -ի ծիսակարգը, առանձնացնել այն ծիսական գործողությունները, ծիսական ուտեստները, խաղերը, որոնք իրագործվելու են: Ընտրել և ուսուցանել Տեառնընդառաջի ծեսին հատուկ ծիսական երգեր, ազգային պարեր, պարերգեր: Խաղալ ազգային ծիսական խաղեր, որոնք կարող են ուղեկցվել ազգային պարեղանակներով: Պատրաստել հարսի և փեսայի ծիսական տիկնիկներ, խաղարկել հարսանեկան ծիսական հատված: Տեառնընդառաջի ծիսական կրակի համար ընտրել և նախապատրաստել համապատասխան փայտեր: Իմանալ կրակի վրայից թռչելու անվտանգության կանոնները:

Արդյունք

Սովորողները

- կիմանան՝ որն է ազգային ծեսը, տվյալ դեպքում՝ Տեառնընդառաջը,
- կկարողանան կատարել ծիսական երգեր, պարեր, խաղերգեր, պարերգեր, ծիսական գործողություններ, պատրաստել ծիսական պարագաներ,

---

3.Քաջբերունի, Հայկական սովորույթներ [Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), գ. 7-8, Թ., 1901, էջ 168]:

- կլինեն ազգային մշակույթը կրող, փոխանցող:

Թեմա՝ Սուրբ Զատիկ

Խումբ՝ միջին

Նախադպրոցական երեխաների հայեցի դաստիարակության վառ օրինակ է Զատկի տոնակատարությունը մանկապարտեզում: Մինչ տոնը որպես ցերեկույթ անցկացնելն անհրաժեշտ է պահպանել ծիսկարգը և երեխաներին ընկալելի դարձնել դրա բովանդակությունը: Դա կատարեցինք ավագ խմբում թեմատիկ ինտեգրված պարապմունքի միջոցով: Կիրառեցինք ԳՈՒՍ մոդելը, խմբային աշխատանքի, խաղային մեթոդներով: Շատ կարևոր է թեմայի նախնական պլանավորումը և պարապմունքների անցկացումը:

Նպատակը

. Ճշտել և ամրապնդել երեխաների գիտելիքները ծեսերի և ազգային տոների մասին՝ մասնավորապես Զատիկի: Սովորեցնել կառուցել քերականորեն ճիշտ, արտահայտիչ և բովանդակալից խոսք: Դաստիարակել հայրենասիրություն:

Ընթացքը

. Դեռևս Ծաղկազարդին սկսեցինք ցորենացանը և մինչև Զատիկ խնամեցինք: Մանկապարտեզ հրավիրեցինք Ս. Սարգիս եկեղեցու քահանա Տեր Հովսեփին: Շատ հետաքրքիր և ուսուցողական զրույց ունեցանք: Սովորեցինք տերունական <<Հայր Մեր>> աղոթքը և ստացանք Տեր Հովսեփի օրհնությունը: Թեմատիկ շաբաթվա մասին տեղյակ պահեցինք ծնողներին և խնդրեցինք աջակցել ու անմիջական մասնակցություն ունենալ մեր արարողակարգին:

Շաբաթը սկսեցինք զրույցով, որի նպատակն էր երեխաներին հաղորդել գիտելիքներ ազգային և կրոնական ծեսերի՝ մասնավորապես Սուրբ Զատկի մասին:

Զարգացրինք թիմային և զույգերով աշխատելու կարողություններ, սովորեցինք խմբային աշխատանքի պարզ կանոններ, հարստացրի բառապաշարը նոր բառերով և բառակապակցություններով: Իրար ավետեցինք <<Քրիստոս հարյավ ի մեռելոց>>, պատասխանելով <<Օրհնյալ է հարությունը Քրիստոսի>>:

Խմբասենյակի պատերին փակցրեցինք Զատկական թեմայով պաստառներ, բացիկներ, երեխաների կողմից պատրաստված խմբային աշխատանքներ, անհատական նկարներ:

Սեղաններին դրված են ծլեցրած ցորեններ, որոնց մեջ դրեցինք ներկած ձվեր: Պատրաստել ենք ցանկությունների ծառ, որը նույնպես երեխաներն են ձևավորում իրենց պատրաստած ձվերով և ցանկություններով: Խմբասենյակը ձևավորված է ուռենու ճյուղերով, ձեռագործ տիկնիկներով՝ պատրաստված ազգային տարազի մոտիվներով, և Սուրբ Զատիկը խորհրդանշող այլ աքսեսուարներով: Մեր տոնի հյուրերն են տատիկների ձեռագործ Ակլատիզն ու Ուստի տատը: Մայրիկներից Շուշանը՝ շոկոլադից մեծ ձու էր պատրաստել, որը ջարդեցինք և նրա միջից դուս եկան ձվի տեսքով բարեմաղթանքներ: Հենց այս բարեմաղթանք-ձվիկներով էլ երեխաները զարդարեցին ցանկությունների ծառը:

Սեղանների դրված են Զատկի կերակրատեսակներ, որոնք պատրաստել են մեր սաների տատիկներն ու մայրիկները՝ գաթա, հալվա, չամչով փլավ, ածիկ, փոխինդ, գունավոր ձվեր, տապակած կանաչի:

Սովորել ենք երգեր և պարեր նվիրված Սուրբ Զատկի տոնին՝ <<Բարի լուր>>, <<Յալալի>>:

Երեխաների պարզ ու մատչելի ներկայացվեց, որ Զատիկը եղել է նախաքրիստոնեական շրջանի տոներից մեկը, որը խորհրդանշում է աշխարհի նորացումն ու բնության զարթոնքը: <<Զատիկ>> բառը կապվում է տիեզերական արարչագործության հետ և նշանակում է <<զատվել>>, <<բաժանվել>>: Քրիստոնեության շրջանում այն նոր բովանդակություն է ստացել: Քրիստոսի մահը և հարությունը զուգորդվել են սերմը հողի մեջ թաղելու (մահ) և նրա ծլարձակման (հարություն) հետ: Երեխաների հետ ծանոթացանք և խաղացինք զատկական ծիսախաղեր՝ ձուկռվոցի, ձուպտտոցի, ձուգլորոցի:



Ծանոթացանք նաև, որ Զատիկի ծեսի գլխավոր խորհրդանիշը ձուն է: Ձուն առանձնահատուկ տեղ է գրավել պտղաբերության հնագույն ծեսերում: Այն համարել են աշխարհի օրինակ. Դրսի կեղևը՝ երկինք, սպիտակ թաղանթը՝ օդ, սպիտակուցը՝ ջուր, իսկ դեղնուցը՝ երկիր: Ձուն համարել են նաև հարության խորհրդանիշ, որը փայփայելով նոր կյանքի սերմը, երկու ծնունդ է ունենում: Երեխաները արվեստի կենտրոնում ձուն նախշազարդեցին ձվի սպիտակուցով և պատկերազարդ անձեռոցիկներով: Ձու ներկելը կարևոր ավանդույթ է Հրաշափառ հարության տոնին: Երեխաները ձուն ջարդեցին և ուսումնասիրեցին կառուցվածքը: Ցորենի հատիկներով կառուցեցին յոթ ձու՝ աճման և նվազման կարգով: Խմորից ծեփեցին ձվեր, ապա կերտաձողով նախշազարդեցին դրանք, իսկ չորանալուց հետո ներկեցին:



Վարդավառ պարապմունք

«Վարդավառը գալիս ա,

Ծաղիկը ցնծալիս ա...»:

Վարդավառը՝ ջրի, ծառ ու ծաղկի պաշտամունքի տոն:

Մասնակիցներ՝

դաստիարակներ, երաժիշտներ, ուսանողներ և ծնողներ:

Առավոտյան 10:00 սկսեցինք ազգային ծիսական խոհանոցում, որին հաջորդեց Վարդավառի ծիսական պարագաների պատրաստումը՝ Խնդում, Կենաց ծառ, Բուկլե Բարան, Խաչբուռ, Պուպլա տիկին... Բարեմաղթանքներով, պարերգերով զարդարեցինք Կենաց ծառը, իսկ բակում՝ կանաչ լանջերին, արդեն ծիսական խաղիկներ՝ խնձորով խաղեր, ազգային խաղիկներ, թռնոցիներ ներկայացնելու շքերթն էր: Իրար հերթ չտալով՝ Անձրևաբեր ծեսի տիկնիկներով խաղում ու հրճվում էին բոլորը՝ ազգային խաղին ավելացնելով ծիսական պարերգերը.

«Նուրին, Նուրին էկել է,

Շալե շապիկ հագել է,

Կարմիր գոտիկ կապել է,

Երկնքեն թոն գուզե,

Գետնեն էլ բերք գուզե»:

«Անձրև, անձրև, գոլ էրա,

Ցորեն հացը բոլ էրա»:

Իսկ վերջում մի լավ օծվեցինք լողավազանի ջրով՝ խաղալով ջրային՝ անձրևի, ամպերի, քամու, արևի հետ կապված, ջրի մեջ մտնելու, ջրից «վախն առնելու» մանկական խաղեր:

Եզրակացություն

Այսպիսով՝ ծեսը ավանդական կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական, խորհրդավոր հատկություններ։ Ծագել է հնագույն ժամանակներում և դարձել պաշտամունքային արարողությունների անբաժան մաս։ Այն ուղեկցվում է աղոթքներով, խմբերգերով, երաժշտությամբ։ Ծեսերը արտահայտում են որոշակի հասարակական հարաբերություններ, ուստի ժամանակի ընթացքում փոփոխվում, վերամշակվում և հարմարեցվում են իրադրության պահանջներին։ Հայ ժողովրդական ծիսական համակարգի ավանդական ծեսերն իրենց բացառիկ կարևոր տեղն ու դերն ունեն, քանի որ նրանց ակունքների վրա է հիմնվում, ապա և կառուցվում բարձրարժեք կրթությունը։ Մի շարք ծեսերի ու սովորույթ դարձած ծեսերի միջոցով զարգանում է սանի ստեղծագործելու ունակությունը, երևակայությունը, ուշադրությունը, հիշողությունը, շարժունակությունը, վարքը, ակտիվությունը, անկաշկանդվածությունը, ինքնուրույնությունը, ճանաչողությունը և մի շարք այլ հմտություններ ու կարողություններ:

Գրականության ցանկ

1. Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոներ, Ե., 2005, էջ 321:
2. Մկրտչյան Ս., Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն), Ե., 2010, էջ 101:
3. Քաջբերունի, Հայկական սովորույթներ [Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), գ. 7-8, Թ., 1901, էջ 168]:
4. Նահապետյան Ռ., Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Ե.,2004
5. Кагаров Е. Г. Культ фетишей и животных в Древней Греции, СПб., 1913
6. Ионин Л. Г. Социология культуры, М., 2004, с. 166